ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/187

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.12.2018թ. թիվ 27/26-3/22517-18 գրությամբ «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00907267) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԱՍՀՆ «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 29.11.2018թ. թիվ ե-120/2 գրության հիման վրա, 06.12.2018թ. նախաձեռնել է «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ ԱՍՀՆ «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ԱՍՀՆ «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ը 29.11.2018թ. թիվ ե-120/2 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կազմակերպված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Տ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ն մի շարք չափաբաժինների մասով գնահատող հանձնաժողովի որոշմամբ առաջին տեղ զբաղեցնող է ճանաչվել, որի արդյունքում 30.05.2018թ. կնքվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Տ» ծածկագրով գնման պայմանագիր: «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ն բազմիցս ներկայացրած հանդերձանքի ձեռքբերման գնման հայտերի արդյունքում չի մատակարարել անհրաժեշտ ապրանքատեսակները և խախտեվել են պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները՝ ավելի քան 10 օրով: Միևնույն ժամանակ «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ն հրաժարվում է մատակարարել ապրանքատեսակները: Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ի միջը 30.05.2018թ. կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Տ-Մ» ծածկագրով գնման պայմանագրի 2.1.7.1, 2.5, 8.5 կետերը՝ «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ը միակողմանի լուծել է վերը նշված պայմանագիրը»:

Պատվիրատուն պատշաճ կերպով ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

3. <u>«ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ն 21.12.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված էլեկտրոնային գրությամբ հայտնել է, որ ս.թ. Ընկերության կողմից առաքվել են պայմանագրով

նախատեսված ապրանքներ, որի համար դուրս է գրվել՝ համապատասխան հաշիվ-ապրանքագիր, և հանձնման-ընդունման արձանագրության, ինչպես նաև պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ թիվ 4 ակտի հետ միասին ուղարկվել է «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ին: Ապրանքն ընդունելուն պես, ՊՈԱԿ-ի տնօրենը Ընկերության աշխատակցի միջոցով տեղեկացրել է, որ ապրանքն ուշացնելու համար ստորագրելու է փաստաթղթերը, առավել ևս հետ չի վերադարձնելու ապրանքները և չի կատարելու վճարումը տվյալ ապրանքի համար: Ընկերությունը երկու անգամ էլեկտրոնային փոստի միջոցով պահանջել է ստորագրել փաստաթղթերի մեկական օրինակները և ուղարկել Ընկերությանը, սակայն որևէ պատասխան չի ստացել: Այդ պատճառով հետագա մատակարարումներ Ընկերության կողմից չեն իրականացվել»:

Ընկերությունը պատշաճ կերպով ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/187 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 06.12.2018թ. թիվ 27/26-3/22517-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ԱՍՀՆ «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ը 29.11.2018թ. թիվ ե-120/2 գրությունը, ՀՀ ԱՍՀՆ «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ը 29.11.2018թ. թիվ ե-120/2 ՊՈԱԿ-ի և «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ի միջև 30.05.2018թ. կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Տ» ծածկագրով գնման պայմանագիրը, «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ի կողմից 21.12.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված էլեկտրոնային գրությունը.

«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի և «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ի միջև 30.05.2018թ. կնքվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Տ»

ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր)՝ ընթացակարգի 2-րդ, 14-րդ, 17-րդ, 18-րդ, 23-րդ և 27-րդ չափաբաժինների մասով:

Պայմանագրի՝

• 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայամանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

• 2.1.1 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

• 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

• 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

• 2.2.4 կետի համաձայն՝ Գնորդը պարտավոր է ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

• 2.2.3 կետի համաձայն՝ Գնորդը պարտավոր է պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

• 2.4.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

• 2.4.2 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

• 2.5 կետի համաձայն՝ ՀՀ կառավարության 2007թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 104-րդ կետի պահանջներին համապատասխան Պայմանագրով սահմանված Գնորդի իրավունքների և պարտականությունների իրականացումը վերապահվում է «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ին:

• 3.1 կետի համաձայն՝ պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 1,078,800 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

• 5.1 կետի համաձայն՝ Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

• 5.2 կետի համաձայն՝ հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում(...):

• 5.3 կետի համաձայն՝ Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշվված 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չստանալու պատճառաբանված մերժումը:

• 8.9 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է

www.procurement.am հասցեով գործող ինտերնետային՝ կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, նույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայամանգրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է մատակարարել հետևյալ անվանումներով ապրանքները.

2-րդ չափաբաժին. Բաճկոն ձմեռային փոքր 1/25 հատ/;

14-րդ չափաբաժին. Հողաթափ ձմեռային /100 հատ/;

17-րդ չափաբաժին. Կոշիկ ձմեռային /45 հատ/;

18-րդ չափաբաժին. Կոշիկ ձմեռային փոքր /55 հատ/;

23-րդ չափաբաժին. Սպորտային հագուստ մեծ /25 հատ/;

27-րդ չափաբաժին. Պայուսակ փոքր/55 հատ/:

Նույն Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ապրանքի մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել՝ Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ Պատվիրատուի գնման հայտի հիման վրա:

19.10.2018թ. Պատվիրատուի կողմից Ընկերությանն ուղարկվել է գնման հայտ N4, որով Պատվիրատուն պահանջել է մատակարարել՝

Բաճկոն ձմեռային փոքր /25 հատ/,

Կոշիկ ձմեռային աղջկա և տղայի մեծ և փոքր /125 զույգ/:

Վերը նշված գնման հայտում որպես ապրանքների մատակարարման ժամկետ նշվել է 05.11.2018թ:

29.11.2018թ. թիվ Ե-120/1 գրությամբ Պատվիրատուն դիմել է «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ին՝ նշելով, որ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ի միջը 30.05.2018թ. կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Տ-Մ» ծածկագրով գնման պայմանագրի 2.1.7.1, 2.5, 8.5 կետերը՝ «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ը միակողմանի լուծում է վերը նշված պայմանագիրը:

Նույն օրը՝ 29.11.2018թ. թիվ Ե-120/ գրությամբ Պատվիրատուն դիմել է նաև ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ տեղեկացնելով, որ.

«ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կազմակերպված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Տ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ն մի շարք չափաբաժինների մասով գնահատող հանձնաժողովի որոշմամբ առաջին տեղ զբաղեցնող է ճանաչվել, որի արդյունքում 30.05.2018թ. կնքվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Տ» ծածկագրով գնման պայմանագիր: «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ն բազմիցս ներկայացրած հանդերձանքի ձեռքբերման գնման հայտերի արդյունքում չի մատակարարել անհրաժեշտ ապրանքատեսակները և խախտվել են պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները՝ ավելի քան 10 օրով: Միևնույն ժամանակ «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ն հրաժարվում է ապրանքատեսակների հետագա մատակարարումից: Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ի միջը 30.05.2018թ. կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Տ-Մ» ծածկագրով գնման պայմանագրի 2.1.7.1, 2.5, 8.5 կետերը՝ «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ը միակողմանի լուծել է վերը նշված պայմանագիրը»:

Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը 29.11.2018թ. Պատվիրատուն հրապարակել է նաև www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Ընթացակարգի քննության շրջանակներում Ընկերությունը 21.12.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացրել է էլեկտրոնային գրություն, որով հայտնել է, որ ս.թ. Ընկերության կողմից առաքվել են Պայմանագրով նախատեսված ապրանքներ: Համապատասխան հաշիվ-ապրանքագիրը, հանձնման-ընդունման արձանագրությունը, ինչպես նաև պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ թիվ 4 ակտը ուղարկվել է «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ին: Ապրանքն ընդունելուն պես ՊՈԱԿ-ի տնօրենը Ընկերության աշխատակցի միջոցով տեղեկացրել է, որ ապրանքն

ուշացնելու համար ստորագրելու է փաստաթղթերը, ետ չի վերադարձնելու ապրանքները և չի կատարելու վճարումը տվյալ ապրանքի համար: Ընկերությունը երկու անգամ էլեկտրոնային փոստի միջոցով պահանջել է ստորագրել փաստաթղթերի մեկական օրինակները և ուղարկել Ընկերությանը, սակայն որևէ պատասխան չի ստացել: Այդ պատճառով հետագա մատակարարումներ Ընկերության կողմից չեն իրականացվել:

Ընկերությունը կից ներկայացրել է նաև իր կողմից կազմված 13.11.2018թ. N4 ահանձնման-ընդունման արձանագրությունը, որով նշված է, որ մատակարարվել է թվով 25 հատ «ձմեռային բաճկոն փոքր» ապրանքատեսակ՝ 120.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, ինչպես նաև համապատասխան հաշիվ-ապրանքագիրը և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ թիվ 4 ակտը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ

քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ի և «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի միջև 30.05.2018թ կնքվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Տ-Մ» ծածկագրով գնման պայմանագրի գնման պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր)՝ 1,078,800 ՀՀ դրամ ընդհանուր գնով:

- 19.10.2018թ. Պատվիրատուի կողմից Ընկերությանն ուղարկվել է N 4 գնման հայտը, որով Պատվիրատուն մինչև 05.11.2018թ. պահանջել է մատակարարել՝ Բաճկոն ձմեռային փոքր /25 հատ/ և Կոշիկ ձմեռային աղջկա և տղայի մեծ և փոքր /125 զույգ/:

- Ընկերության կողմից՝ իր իսկ խոսքով, Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման շրջանակերում 13.11.2018թ. Պատիրատուին է մատակարարել թվով 25 հատ բաճկոն ձմեռային փոքր՝ ընդամենը 120,000 ՀՀ դրամ ընդհանուր գնով:

- Մատակարարված ապրանքի ընդունման վերաբերյալ Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվել, ապրանքը Գնորդին հանձնելու փաստը Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով չի ֆիքսվել:

- Ընկերության կողմից ապրանքի հետագա մատակարարումներ չեն իրականացվել:

- 29.11.2018թ. «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծվել է:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ն «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի հետ 30.05.2018թ. կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Տ-Մ» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված ապրանքները Պայմանագրով նախատեսված ծավալով և ժամկետներում չմատակարարելով՝ խախտել է նույն պայմանագրով ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ առկա է «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.12.2018թ. թիվ 27/26-3/22517-18 գրությամբ «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00907267) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ